ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   Զարա Ասլանյան, ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Բելգիայի Թագավորություն, Բրյուսել քաղաք, 28.04.2026թ. – 30.04.2026թ.

3. **Հրավիրող կողմը**

   Եվրոպական միության «ԵՄ-ն հանուն երիտասարդության» ծրագրի համակարգման և քաղաքականության աջակցության թիմ

4. **Գործուղման նպատակը**

   Գործուղման նպատակն էր մասնակցել «ԵՄ-ն հանուն երիտասարդության» ծրագրի շրջանակում 2021 թվականից ի վեր իրականացված ծրագրի ամփոփմանը, ինչպես նաև քննարկել ծրագրի հաջորդ փուլերի հնարավոր ուղղություններն ու առաջնահերթությունները:

   Հանդիպմանը ներկայացվել են ծրագրի շրջանակում վերջին տարիների հիմնական արդյունքները և ազդեցությունը:

   Որպես լավագույն արդյունք ներկայացվել է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակության հզորացում Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրի ներքո իրականացվող «ԵՄ-ն հանուն երիտասարդների. երիտասարդների ներգրավում և հզորացում» ծրագրի (համաֆինանսավորվում է Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության կողմից) շրջանակում իրականացված աջակցությունը Հայաստանի Հանրապետությունում 2025 թվականի մարտին ընդունված «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի մշակման մասնակցային գործընթացին՝ ընդգծելով՝ «ԵՄ-ն հանուն երիտասարդության» ծրագրի շրջանակում ստեղծված երիտասարդական քաղաքականության լաբորատորիաների երիտասարդ մասնակիցների ներգրավվածությունը կոնսուլտացիաներին մարզերում, որոնց կողմից ներկայացված մի շարք առաջարկներ ներառվել են օրենքի վերջնական տարբերակում:

5. **Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը**

   Հանդիպումների ընթացքում քննարկվել են ծրագրային մոտեցումների արդյունավետությունը, գործընկերային համագործակցության ձևաչափերը, ինչպես նաև թեմատիկ առաջնահերթությունները և քաղված դասերը:

Խմբային քննարկումների արդյունքում առանձնացվել են մի շարք ուղղություններ, որոնք կարող են ներառվել «ԵՄ-ն հանուն երիտասարդության» ծրագրի հաջորդ փուլերում, մասնավորապես՝

- երիտասարդների հոգեկան առողջության խթանում,
- մեդիագրագիտության ոլորտում կարողությունների զարգացում:

6. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Հայկական կողմի կողմից առաջարկվել է ծրագրի նոր շրջափուլի նախագծման ընթացքում որպես գործընկեր դիտարկել ոչ միայն երիտասարդական հասարակական կազմակերպությունները, այլև երիտասարդական նախաձեռնող խմբերը, և որպես գործողություններ ներառել հետևյալը՝

- **Երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում՝** ապահովելով ակտիվ մասնակցությունը պետական և համայնքային մակարդակներում մշակվող երիտասարդական քաղաքականությունների ձևավորման, իրականացման և որոշումների կայացման գործընթացներին
- **Երիտասարդական նախաձեռնող խմբերի կարողությունների զարգացում** ստեղծելով հնարավորություններ երիտասարդական նախաձեռնող խմբերի համար, զարգացնելով նրանց ինստիտուցիոնալ կարողությունները:

7. **Ակնկալվող արդյունքները**

Հայաստանի կողմից առաջարկվեց նոր ծրագրային շրջափուլի նախագծման ընթացքում որպես գործընկեր դիտարկել ոչ միայն երիտասարդական հասարակական կազմակերպությունները, այլ նաև երիտասարդական նախաձեռնող խմբերը և դրանց ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը:**